

Հ ՈՒ Շ Ա Պ Ք Ի Ր

«ԳՈՐԾԱՐԱՐ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ»

Հաշվի առնելով սոցիալ-տնտեսական բարեփոխումների արդյունավետ իրականացման դերն ու կարևորությունը երկրի տնտեսական և սոցիալական զարգացման գործում.

Համոզված լինելով, որ մասնավոր հատվածի և մասնավորապես ՓՄՁ ոլորտի կայացումը կարևոր երաշխիք է երկրի կայուն տնտեսական զարգացման և հասարակության միջին խավի ձևավորման գործում.

Նպատակ ունենալով ապահովել քաղաքացիական հասարակության և հատկապես մասնավոր հատվածի ներգրավվածությունն ու գործուն մասնակցությունը «պետական-մասնավոր» գործընկերության, ինչպես նաև սոցիալ-տնտեսական և մասնավոր ձեռնարկատիրության ոլորտներում հանրային քաղաքականության մշակման, իրականացման, վերահսկման և գնահատման գործընթացներում.

«Գործարար շահերի պաշտպանության ցանցի» անդամներս սույն Հուշագրով արտահայտում եմք մեր կամքը և հաստատում մեր պատրաստակամությունը միավորել մեր ջանքերը և համագործակցել հանուն Հայաստանում ժողովրդավարական սոցիալ-տնտեսական բարեփոխումների իրականացման և մասնավոր ձեռնարկատիրության զարգացման:
